

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԵՂԻՇԷ ՊԱՏՐԻԱՐԲ
ՏԵՐՏԵՐԵԱՆԻ ՏԱՊԱՆԱՔԱՐԸ

Հանգուցեալ Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի տապանաքարի կառուցման համար նշանակուած յանձնախումբը (Լուսարարապետ Գեր. Տ. Դաւիթ Արք. Սահակեան, Ս. Փրկիչ Վանուց տեսուչ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Գալայնեան, եւ Հոգ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեան) իր աշխատանքը ամբողջացուց երեք տարբեր ֆանդակագործներէ ստացուած յատակագիծերէն մէկը ընտրելով, եւ հանգուցեալ Պատրիարքի գերեզմանին վրայ գետեղել տալով սեւ պազալթէ մարմարը, փորագրեալ գեղեցիկ գծագրութեամբ եւ արձանագրութեամբ:

Քրիստոսի Այլակերպութեան տօնին յաջորդ օրը, Սրբոց Յակոբեանց Տաճարին մէջ մատուցուած Սուրբ Պատարագէն եւ ազգիս հայոց համայն ննջեցելոց հոգիներուն համար կատարուած հոգեհանգստեան պաշտօնէն յետոյ, գլխաւորութեամբ Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր, Միաբանութիւնը եւ ժողովուրդը թափօրով եւ շարականներու

երգեցողութեամբ առաջնորդուեցան դէպի Սուրբ Փրկիչ: Հանգուցեալ Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի գերեզմանին շուրջ հաւաքուած, խաչածեւ ծաղկեպսակը գետեղուեցաւ եւ Հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Սուրբ Աթոռոյ բոլոր Պատրիարքներու հոգւոց համար, եւ նոր գետեղուած տապանաքարի վրայ կատարուեցաւ հանգուցեալ Պատրիարքի Գերեզմանի կնքման օրհնութիւնը՝ «Օրհնեցի եւ կնքեալ պահեսցի դամբարան եւ ոսկերք ծառայիս Աստուծոյ . . . մինչեւ ի գալուստն Քրիստոսի»:

Նոյնպէս թափօրով Միաբանութիւնը վերադարձաւ Ժառանգաւորաց Վարժարանի փոքր սրահը ուր ըստ աւանդութեան «հոգեսուրբ» հրամցուեցաւ ներկաներուն:

Նոյն երեկոյին, միաբան Եպիսկոպոսներ եւ վարդապետներ իրենց ընթրիքը ունեցան Ամեն. Պատրիարք Սրբազանին հետ, Պատրիարքարանի քացօթեայ պարտէզին մէջ:

ՍՐԲԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԷՋ

Յուլիս 22, Չորեքշաբթի, կէսօրէ վերջ ժամը 4ին, Ամենապատիւ Տ. Թորգոմ Պատրիարքի հովանաւորութեամբ, Ժառանգաւորաց վարժարանի մեծ սրահին մէջ, բացումը կատարուեցաւ Ֆրանսահայ ծանօթ նկարիչ Արտաւազդ Պերպերեանի վերանորոգած կրօնական նկարներու: Հոծ բազմութիւն մը ներկայ էր, ի միջի այլոց նաեւ օտարներ: Պատրիարք Սրբազան հայրը, իր բացման խօսքին մէջ, շնորհաւորեց Պր. Արտաւազդ Պերպերեանը, իր մանրակրկիտ եւ տփնշան աշխատանքին համար, որով տասնըութերորդ եւ տասնիններորդ դարերէն մեզի հասած նկարներ, վերստին կեանք ստացան իրենց խօսուն արտայայտութիւններով: Պատրիարք

Սրբազանը ըսաւ թէ, պէտք է տէր կանգնինք մեր հոգեւոր եւ բարոյական արժէքներուն, որոնք անխորտակի ժառանգն են հայ ժողովուրդին:

Ցուցահանդէսին բացումը խթան մը եղաւ հայ եւ օտար արուեստասէրներու, որոնք իրենց յանախակի այցելութիւններով, հայ արուեստին պատգամը փոխանցեցին իրենց շուրջիներուն:

Այսպէս, Պր. Արտաւազդ Պերպերեան, հրաւիրուեցաւ Երուսաղէմի ճայնասփիւռէն. ելոյթ ունենալով վերոյիշեալ նկարներու կապակցութեամբ եւ տեղւոյս ձերուսալէմ Ռիփորթ շաքաթաքերթի թղթակիցը եկաւ եւ ցուցահանդէսը լուսանկարեց, եւ յօդուած մը լոյս տեսաւ այս մասին: